ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆ*

Այն սև՛ օրերին, ծա՛նր օրերին,
Երբ հողը հայոց նշխարի նման,
Դաժան մատներով կիսվել էր արդեն երկու բեկորի,
Եվ ապատության հալածված ոգին,
Իջած դրոշից մեր ոտնահարված,
Ապաստանել էր լոկ սրտերի մեջ, որ մխար այնտեղ անեղավրեժ,
Օ՜, այն օրերին, որպես փրկության հպոր էլեքսիր,
Դու աշխարհ եկար, հայոց այբուբեն:

Կյանքի՜ կոչվեցիր,
Որ կյանքը հայոց բոցկլտար հավետ իր հին օջախում,
Որ պարսիկները՝ արևի անվամբ չմարեին վառ արևը հայոց,
Որ Արևմուտքը, մեկ Աստված տալով, անաստվածորեն մեկ չկոխոտեր,
Եվ որ Արաբիո ու Մոնղոլիայի հեղեղները հորդ
Մեր Արարատյան արգավանդ դաշտից
Որթատունկերը մեր չխլեին:

Դու եկար, որ մեր ոգվի շեփորին դառնաս ձայնակից.
Հրամա՜ն դառնաս վսեմ Վարդանի մատների ներքո,
Դառնաս Գահնամա՜կ Հայոց աշխարհի,
Երգի՜ փոխարկվես,
Եվ Ավարայրի սրբական մարտում
Նահատակվելով, ելնե՜ս, բարձրանա՜ս...

Ջեկ կյանք շնորհվեց, հայոց այբուբեն,
Որ մեր Եղիշեն մահարձան կերտեր մեր անմահներին,
Որ Խորենացին դառնար պատմահայր մի մասիսակերպ,
Որ Շիրակացին արևը գրկեր տիեզերամուխ իր երակներում,
Որ հայ հանճարի խոյ խառնարանից
Երկինք բարձրանար Ողբը Նարեկյան,
Եվ գույները վառ մեր երակների ու մեր բորբ ծաղկանց
Մագաղաթների դեմքին դրոշմվեր
Թորոս Ռոսլինի կախարդ վրձինով:

Եկա՜ր, որ դառնաս հոգեհույզ նամակ՝ առ հույժ սիրելին,
Սրտից-սիրտ հոսես՝ ինչպես ջուրը պաղ՝ պապակ դաշտերում,
Որ թոռան թոռի՛ն թղթերում թողնես անունն իր նախնու,
Իր ե՛րգը պահես նրան հիշատակ,
Եվ, որ դարերով ու աշխարհով մեկ ցրված հայության հոծ կանգվածներին
Շաղկապե՛ս միմյանց,
Պոհպանե՛ս, պահե՛ս օտար հոգվերի ու շանթերի դեմ:

* *Տպագրվում է որոշ կրճատումներով.*

ԳԱՌԱ ԽՈՒՄԽՈՒՄՈՎ ՄԱՏԻՆԱՎԱՐՈՒՆԻ ԱՌԱՆՑ
ԵՍԻՐՄԱ ԳՈՒՇԱՐՄԱ ԹԱՐԳՄԱՆԻՉ, ԽՈՍՔԻՉ
Հեղինակ, Բաղդասարյան Գևորգի Գրիգորի